

նում բաւական ժողովուրդ կար: Այսօր ուրբաթ օր, 23-ին հոկտեմբերի կը կայանայ նոյն թատրոնում պ. Երեցեանի երկրորդ դասախօսութիւնը: Իսկ նոր երրորդ և չորրորդ դասախօսութիւնները լինելու են 28-ին և 30-ին այս ամսի: Ահիւրը 7½ ժամին երեկոյեան:

Պ. Երեցեանի դասախօսութիւնների տոմսակները միասին և առանձին, կարելի է ստանալ պ. Մատուրեանի խանութում և Արծրունու թատրոնի կասայում: Գներն են 1 ռուբլից սկսած մինչև 15 կոպէկ:

Լսում ենք որ ռուսաց «Кавказъ» լրագիրը մի այլ խմբագրին երեք տարի ժամանակով տալու համար կազմված է Գլխավոր վարչութեան մէջ մի յանձնաժողով, որ արդէն մշակել է լրագրի պրոցրամի ծրագիրը: Լսում ենք որ այդ պաշտօնական թերթի խմբագրի պաշտօնը յանձն առնելու համար չորս կանդիդատներ կան, որոնցից երկուս ռուսներ են, մի հայ և մի վրացի:

ԱՌԱՂՔԱՒԱՅԻՅ մեզ գրում են: «Քաղաքիս փողոցները անմաքուր են պահվում: Չը նայելով որ քաղաքային գումարից 400 ռուբլ տարեկան յատկացրած է քաղաքի մաքրութեան համար, այնու ամենայնիւ Ախալքալաքը մնում է նոյն անմաքրութեան մէջ և յայտնի չէ թէ ինչ բանի վրա է գործ դրվում վերև յիշված գումարը: Լաւ կը լինէր որ քաղաքային բժիշկը ուշադրութիւն դարձնէր այդ անմաքրութեան վրա առողջապահական տեսակէտից»:

Մեզ գրում են Ախալքալաքի գաւառից: «Վարիվանի հասարակութեան մէջ կան միայն երկու վրացախօս հայ-կաթօլիկ գիւղեր, խիզապարտ և Վարկավ: Իսկ մնացած գիւղերում բնակվում են հայ-լուսաւորականներ և հայախօս հայ-կաթօլիկներ: Հասարակութիւնը որոշում է երկու գիւղական ուսումնարան բանալ: Եւ ահա բացվում են ուսումնարաններ մին խիզապարտ, իսկ միւսը Ալաստան հայախօս գիւղում: Բայց յայտնի չէ թէ ում շնորհով երկու դպրոցներին էլ ուղարկում են երկու վրացի ուսուցիչներին: 700 ռուբլ ուժիկով և ահա հայերի և հայ-կաթօլիկների զաւակները 20—30 վերստ պէտք է ճանապարհորդին որպէս զի իրանց համար անծանօթ, վրաց լեզուով դասաւուսութիւն լինելու վրայ որ հասարակութիւնը մտադիր է վճիռ կայացնել, տեղական բարձրագոյն իշխանութեանը խնդրելու, որ դարձեալ բացվեն երկու ուսումնարաններ հայ ազգաբնակչութեան համար»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԹԻԱՅԻՅ

Կ. Պօլիս, 8 հոկտեմբերի

Միացեալ ընկերութեան վերջին մի քանի ամիսներու մէջ ստացած փոփոխութեանց մասին չը փութացնէք տեղեկութիւն հաղորդել պատուական Մշակիչ, զի դեռ այս փոփոխութիւնը վերջնական ձև մ'առած չէին: Այժմ որ այդ ձևն ստացան, կուզանք հարկ եղած բացատրութիւնքը տալ մեր ուսանող եղբայր, որպէս զի չը խաբուին Մեզու Հայաստանի մէջ հրատարակուած Սօսիւն, Քննիչ և ուրիշ ստորագրութեամբ պոլսական թղթակցութիւններէ, որոնց հեղինակաց ինչ ոգույ ծառայելի քիչ մը ետքը պիտի տեսնենք:

Այն վարչութիւնը, որոյ գլուխն էր պ. Թորոսեան անուն երեսուցեանցի էֆէնտի մը, իւր աստիճանները, անշահութեամբ և չափանշորութեամբ զղուանք աղղած էր ամենուն, բացի ազգականներէ և գործընկերէ: Ընկերութեան Երեսփոխանք ընտրութեան օրէն ի վեր կը քննադատէին և կը դատապարտէին զայն ամեն նիստի մէջ, այլ զօրաւոր մղում մը պէտք էր զայն տապալելու համար: Այս մղումը եկաւ Ռուսաստանէն, երբ Մշակի աշխատակից պ. Գ. Նիկողոսեան արիասիրտ երիտասարդ Կ. Պօլիս եկաւ և յանուն Մշակի և ուսանողաց խօսելով, որոնց նուէրները վայելած են միշտ

Արժարտեան, Գարոցաւիրաց և Արիկեան ընկերութիւնը և ասոնց յաջորդ Միացեալ ընկերութիւնն, պահանջեց որ ընկերութեան անձը կարող ձեռքբերու յանունի Թորոսեան, Շիշմանեան, Վասիլեան և իրենց կուսակիցը շատ մեքենայութիւններ ըրին իրենց պաշտօնը պահպանելու համար, այլ հարուածը զօրաւոր էր, և պարտաւանաց և անվտանգութեան քուէ առաջարկուելով և ամբաստանագիր կարգացուելով իրենց դէմ կեցողական ժողովոյ մէջ, պաշտօնանկ եղան: Այս թուականէն ի վեր սաստիկ ոյն պահած են զիրենք տապալուողներուն դէմ, այսինքն Մշակի, պ. Նիկողոսեանի, պ. Փեշտիմալեանի, պ. Չերազի և այլոց դէմ, և ամեն առթիւ կը ջանան իրենց անձնական վրէժը լուծել ամենխաղաղ միջոցներով: Յաւալի է որ Ռուսաստանի մէջ Մեզու գործիք կը լինի իրենց այս յիսկալութեան և իւր էջերը կը բանայ խիստ յարգելի անձերը նախատող և զըրպարտող թղթակցութեանց, որոնց թելադիր եղած են լոկ անձնական կիրք և անձնական շահ:

Այս պարտեալ Տնօրէն ժողովը այսօր աւելի գտած է իւր յաղթականաց դէմ ազադակելու, վանայ վարժապետանոցին փակումը իրեն դէմք ընելով: Ժողովուրդը, խնդրին պարագաները չը դիտարկով, կրնայ մոլորել և կարծել թէ արդի Տնօրէն ժողովը վնասակար գործ մը կատարած է դպրոց մը փակելով: Ուստի խնդիրը լուսաբանելու համար պէտք է որ մանրամասնութեանց մէջ մտնենք:

Մշակի խմբագրական յօդուածները, պ. Նիկողոսեանի, պ. Փեշտիմալեանի և պ. Չերազի համոզումները կը պահանջէին որ Միացեալ ընկերութեանց ուղղութիւնը բարեփոխուի և աւելի օգտակար լինի ազգի անմշակական պիտոյից: Ուստի կը քարոզէին անդադար բարձրագոյն կրթութեան տեղ նախակրթութիւն ծուարելու Հայաստանի մէջ և դպրոցներու ուսանելեաց կարող դասել արհեստական դարձացման ճիւղն ալ: Երբ անցեալ Տնօրէն ժողովը կործանեցաւ և պ. Փեշտիմալեան ընտրուեցաւ ատենապետ, սա փրարութի յատուկ ազդուութեամբ իսկոյն առաջարկեց Միացեալ ընկերութեան երեսփոխաններուն որ իրենց ուղղութիւնը փոխելով նախակրթական և արհեստական ուղղութիւն ընդունեն. երեսփոխանք պատրաստուած չէին այս նոր գաղափարաց և մերժեցին, որով պ. Փեշտիմալեան հրաժարեցաւ:

Այս անգամ ատենապետ ընտրուելով պ. Միշտ Գերազ, որոշեց անդադրել կերպով և դիտարկութեամբ հասնել ցանկացած նպատակին: Ուստի, ճինգ ամիս իւր պաշտօնը շարունակելէ և ընկերաց միտքը պարտաստելէ յետոյ, կեղծական ժողովին առաջարկեց նախակրթութիւն ընդունել, և այս առաջարկը երեք նիստերու մէջ վիճարանել յետոյ վերջապէս ընդունուեցաւ 5 քուէի դէմ 23 քուէով:

Այս քեմ վիճարանութեանց մէջ էր որ պ. Չերազ ստիպուեցաւ երևան հանել պաշտօնապէս այն հաշուական և դրամական զեղծումներ, զորս գործած էին Շիշմանեան, Վասիլեան և ընկերքը, զեղծումներ որոնց դէմ արդէն ազդուապէս բողոքած էր պ. Նիկողոսեան և նախորդ վարչութեան անդամք աներեսարար յարձակած էին իւր յայտնած ճշմարտութեանց դէմ: Պ. Չերազ չէր ուզած ի սկզբան ամեն բան խօսել և յայտնութիւններ անել, կարծելով թէ վատ տպաւորութիւն պիտի անէ ընկերքը զիրայ և ընկերութեան վարկին վնաս է. բայց երբ Սօսիւն ի դաշնակիցներն սկսան բղաւել, պարտաւորուեցաւ յայտնել թէ տարեկան 6,000 դրու իրենց անձնակալներն յատկացուած էին Շիշմանեան և ընկերքը և 2,000 դրու չալ յիմար ծախսերու յատկացուցած, որով խնայողութիւնը մը կրցած է ընել, իսկ վերջերք յաջողեցաւ վարժապետանոցի փակմամբ 700 ոսկի խնայել, կեցողական ահազին ծախքը կրկն և տեսչութեանց և վարժարանաց մէջ կարեւոր խնայողութիւններ ի գլուխ հանել:

Այս յայտնութիւններէն զատ, պ. Չերազ ստիպուեցաւ յայտնել թէ պարոնները քննադատելի հաշիւներ տուած էին և թէ անոնք լանդ հաշիւները պատրաստ են ընել վեց աւել յետոյ միայն կրցած էին յանձնել իրենց հաշուետուարները, որք անկանոն, պակասաւոր, արուած, սրբուած և անմաքուր վիճակի մէջ էին հակառակ օրինաց և ուղղութեան, ինչպէս որ հեղինակներն իսկ զգալով՝ ետ առին այդ տօ-

մարները և այսօր մաքուրը դնելու գրադած են: Մինչդեռ իրենց հաշիւները պատրաստ չէին, իրենք անամթաքար կը հրատարակէին լրագրաց մէջ թէ պ. Նիկողոսեան կը սխալէր իրենց հաշիւներուն բացակայութիւնը դատապարտելով, վասն զի իրենց հաշուէկշիւը արդէն ներկայացուցած են եղբր, և այն: Ահա այսպիսի սքտախօսութիւններով կը խաբէին ազգը Կ. Պօլսոյ մէջ անգամ, ուր իրենց գործերը ծանօթ են ամենուն, և այսօր կը ջանան խաբել ուսուսանողիքը, վասն զի Տփլիսի մէջ ոչ ոք տեղեակ է իրենց մանրամասն արարքներուն և մեքենայութեանց:

Վերջերս կեցողական ժողովը հինգ անձերէ բաղկացեալ յանձնաժողով մ'ընտրեց այդ հաշիւները քննելու համար: Երեսփոխանք զարմացան տեսնելով որ Սօսիւն ի կուսակիցները կառաջարկէին որ հինգն ալ իրենցմէ առնուի, որպէս զի ներողամտութեամբ քննեն հաշիւներն: Ահա վատութեան ապացոյց մ'ալ: Եւ այսօր, խորամանկ հակառակորդի մը շնորհիւ, այդ քննիչները մեծաւ մասամբ Սօսիւնի բարեկամներէն կազմուած են, և անշուշտ բժանդրութիւն չը պիտի ընեն...:

Այս զեղծմանց մի մասը հրատարակուած է արդէն Սօսիւնի մէջ, «Ո՞վ է խելագարութիւնը» վերնագրով չորս յօդուածի մէջ, հեղինակը մի առ մի երևան հանած է պ. Շիշմանեանի և ընկերաց ծանր խելագարութեանն ու խարդախութիւնքը վարժապետանոցի խնդրոյն մէջ:

Այս խնդիրը բաւական ծանօթ է ուսանողաց, վասն զի «Մշակ» և «Մեզու» արտատպեցին արդէն ներկայ վարչութեան տեղեկագիրը, որ կը պատմէ վարժապետանոցի թերութիւնքը: Ընկերք, երբ պաշտօնակ եղան, շնորհիւ իրենց չաւայ վարչութեան 400 ոսկի պարտք թողած էին այն դանձուն մէջ ուր 4,000 ոսկի պատրաստ գտած էին, և իրենց յաջողութիւնը ի հարկէ ստիպեալ խնայողութիւն պիտի ընէին, ընկերութիւնը կործանուած ազատելու համար. ուստի բնական էր որ այդ մեծածախ վարժապետանոցը զոհ երթար: Ասկէ զատ, վարժապետանոցին մէջ իբր թէ բարձրագոյն գիտութիւններ կուսանողներն այնպիսի աշակերտներու, որոնք մեծաւ մասամբ հարուստ կամ կարող ծնողաց զաւակ էին: Իրենց հայրերը սովորեցնում էին արհեստները, և այնպէս ահագին գումարներ կորցած: Երբ այս անգուց ճարտասանները, որք Փեշտիմալեանի վաշխառուին հայրենակիցներն են, իրենց զաւակաց կը յատկացնէին փոքրիկ գիմնադրանքներու հաւաքած կոպէկները Թիֆլիսի հոգեհանգիստներու մէջ, անդին Քուրդաստանի մէջ հազարաւոր հայեր քրդացած կը կորչէին, և Միացեալ ընկերութիւնը փող չէր ունենար որ երթար դպրոց բանալ այդ կորած, օտարացած և աղքատ հայ գիւղացիներու մէջ, և կը շարունակէր սասակ վատնել Վանայ մէջ, ուր արդէն 10-ի չափ ծրխական դպրոցներ կային և ուր ժողովուրդին 90%՝ 6-ը կարդալ գրել գիտէ: Ահա այս անհրաժեշտ պէտքերն առջև Տնօրէն ժողովը պարտաւորուեցաւ կարօտին հացը յափշտակել հարուստի կողորդէն:

Այս կարգադրութիւնը Սօսիւնի կուսակիցներու գործին չէր գար, վասն զի կը յայտնէր թէ իրենք տարիներով կատարած էին այդ անիրաւութիւնը և աղքատաց ձրի կրթութեան համար հաւաքված լուծան հարուստներու ամբարտաւանութեանը գործածած էին: Այս է պատճառ իրենց ընդդիմութեան, մինչդեռ Տաճկաստանի բոլոր ուղիամիտ և արդարասէր հայերը, Ներսէս պատրիարքն սկսած, կը հաւանին պ. Չերազի առաջարկին և կը դատապարտեն պ. Շիշմանեանի և ընկերաց անմտութիւնքը:

Այսպէս ուրեմն Միացեալ ընկերութիւնը ընդունեցաւ նախնական կրթութիւն տարածելու պոօկուամը, փակելով Վանայ մէջ ունեցած միակ բարձրագոյն կրթարարը, թէև անուամբ բարձրագոյն քան իրօք: Միացեալ ընկերութիւնը կուզէ այսօր կարդալ, գրել և հաշուել սովորեցնել մի քանի հազար հայ գիւղացիներու, փոխանակ քառասուն հարուստ քաղաքացոյց աստղաբաշխութիւն և եռանկրեւալափութիւն սովորեցնելու:

Իսկ արհեստական ուղղութեան գործը յանձնված է այժմ նորահաստատ «Տեսնասագիտական միութիւն հայոց» անուն մի ընկերութեան, որ Ներսէս Պատրիարքի նախագահութեան տակ

կազմվեցաւ «Մշակի» և պ. Նիկողոսեանի յօդուածներէն ցնցուած: Այս ընկերութիւնը պիտի հողայ Հայաստանի տնտեսական կացութիւնը, մինչդեռ Միացեալ լոկ կրթականին վրայ պիտի ամփոփէ իւր ոյժերը: Ուրեմն այս երկու ընկերութիւնք արժանի են վայելել այսուհետև ամբողջ ազգին համակարանը և աջակցութիւնը, մասնաւորապէս «Միացեալ ընկերութեանց» արդի վարչութիւնը անշահախոյր անձերու յանձնված լինելով, հաշի մասին ո և է կասկած չը կայ և հաշիւները կանոնաւորապէս չորս ամիս մի անգամ պիտի հրատարակուին, նախորդ վարչութեան հաշիւներու քննութենէն յետոյ:

Խնդրելով որ «Մշակի» անկողմնակալ ընթերցողաց ներկայացուէք «Միացեալ ընկերութեանց» արդի վիճակի այս մխիթարիչ պատկերն, ի հերքումս «Մեզու» ստախօս թղթակիցներուն, կաղաչեմ, մեծապատիւ խմբագրապետ, որ ընդունէք խորին յարգանացս հաւատարմքը:

Ա. Բ. Գ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Հոկտեմբերի 18-ին գերմանական պահպանողականները տօնեցին Լէյպցիգի մօտ եղած պատերազմի 68 ամակը: Այդ առիթով «National Zeitung» լրագիրը նկատում է: «Հարկ է ծագում, արդեօք ինչ օգուտ քաղեցին պահպանողականները այդ պատերազմի հետեանքերից: Գերմանիայի ազատութեան համար, 1813 թուականի հոկտեմբերի 13-ից յետոյ այդ պատերազմը մի գլխաւոր առաջնորդները հեռացած էին գործերից: Գարդենբերգ զրկվեցաւ իւր ազդեցութենից, Վիլհելմ Լոււււրը ստիպված էր հրաժարական տալ, Ֆիլիպսըալ Գլոյցընաու և անկախութեան համար ոգևորութեամբ կուսողները հաւածանքներ ենթարկվեցան, մարմնամարդական կուրները ծածկվեցան: Հարիւրաւոր կանաք փրչացաւ: Երեսփոխաններին, որոնց միակ յանցանքը ազգասիրական երգերի երգելն էր, մի բանտից միւս բանտն էին թրեւում: Վիլհելմ III պահպանողականների ազդեցութեան տակ չը կատարեց իր խոստումը պետական գործիչներին գումարելու մասին: Հրատարակվեցան յայտնի հրամանները համալսարաններին և մամուլի դէմ: Կա առաջին և վերջին յետադիմութիւնը չէր Գերմանիայի մէջ, բայց նա ամենասանգուցի և երկարատև էր: Տարաբաղաբար այդպիսի գործերը չուտով են մուսազուգ հետեակ սերունդներին»:

— Պրոֆէսոր Վոսկէն իր ընտրութիւնն գրած մի նամակով սաստիկ քննադատում է կառավարութեան այժմեան գործունէութիւնը: Կասում է, որ այդ գործունէութիւնը ուղղված է յայտնաբերելու կուսակցութիւնների համայնքներին և պաշտօնական անձանց դէմ: Նամակի հեղինակը ցուակցութիւն է յայտնում, որ գերմանական ազգը ստիպված է պաշտպանել իր գոյութիւնը այն մարդու դէմ, որ նրա ազատողը և մինչև անգամ լուսնորդն է եղել:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 հոկտեմբերի Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 25 կ., երկրորդ 92 ռ. 25 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 91 ռ. 87 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 221 ռ. 50 կ., երկրորդ 215 ռ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ., երկրորդ 90 ռ. 12 կ., երրորդ 90 ռ. 12 կ., ոսկի 7 ռ. 66 կ.: Ռուսաց 1 ռ. Լոնդոնի վրա արժէ 25,81 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 220 մարկ 25 պֆ., Փարիզի վրա արժէ 272 ֆրանկ 25 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 հոկտեմբերի: Հոկտեմբերի 17-ին տեղի ունեցաւ բանուորների համար պետական գանձարաններ կազմակերպող յանձնաժողովի առաջին նիստը: Սեմեով նախագահը յայտնեց իր համակրութիւնը այնպիսի կազմակերպութեան, որ միջոց կը տայ աշխատողներին, որոնք կը կամենան մի քանի տարվայ համար թոշակ ստանալ, կամաւոր կերպով մասնակցել գանձարաններին: Պարտադիր օգնութեան հետ միասին, թոյլ է արվում և բարեգործութիւնը յօգուտ գանձարանների: «Порядок» հաղորդում է որ նահանգական իւզական ինստիտուտներին թոյլ է տուած ունենայ երթեկ աշակերտութիւններ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ